ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00374 10) 511-771 www.court.am

ԴԴ-1 Ե-10154

«29» դեկտեմբերի 2025թ.

«ՍՈՐԵԼԼԻ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Տ. ՍԻՐԵԿԱՆՅԱՆԻՆ

(հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Աստղաձոր, Ազատամարտիկների 6/3)

Հարգելի պարոն Սիրեկանյան,

Դատական դեպարտամենտի և «ՍՈՐԵԼԼԻ» ՍՊԸ-ի միջև 14.08.2025թ. կնքված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում 22.09.2025թ. կնքված թիվ 1 համաձայնագրի համաձայն՝ ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 2025թ. նոյեմբերի 24-ը, սակայն Ձեր կողմից սույն թվականի դեկտեմբերի 9-ին մատակարարված ապրանքներից Պայմանագրի 4-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքները (աթոռ համակարգչային) չեն ընդունվել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառաբանությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 29.12.2025թ. դրությամբ Ձեր կողմից չի իրականացվել Պայմանագրի 4-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրին համապատասխանող համակարգչային աթոռների մատակարարումը, հայտնում ենք, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «ա» պարբերությունը (այն է՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում) Դատական դեպարտամենտը 29.12.2025թ.-ին միակողմանի մասնակի (4-րդ չափաբաժնի մասով) լուծում է Պայմանագիրը:

Այս կապակցությամբ տեղեկացնում ենք, որ.

- «ՍՈՐԵԼԼԻ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված

900005028106 գանձապետական հաշվին ուշացված 25 աշխատանքային օրվա համար փոխանցել 46,500 ՀՀ դրամ, որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետ), և 18,600 ՀՀ դրամ, որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետ)՝ վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելով Դատական դեպարտամենտ,

- մինչև 2026թ. հունվարի 8-ը Պայմանագրի 4-րդ չափաբաժնի մասով պայմանագրի և որակավորման ապահովման գումարները (համապատասխանաբար՝ 372,000 ՀՀ դրամ և 558,000 ՀՀ դրամ) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված համապատասխանաբար 900005000758 և 900008000664 գանձապետական հաշիվներին փոխանցվելու դեպքում չի կայացվի «ՍՈՐԵԼԼԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում (վճարումը հավաստող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել Դատական դեպարտամենտ),

- տույժերի, տուգանքների և ապահովումների գումարները վերը նշված ժամկետներում չվճարվելու դեպքում Դատական դեպարտամենտը կձեռնարկի միջոցներ՝ դրանք գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կապ՝. Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչություն
Հեռ.՝ /+37410/ 511-777, 511-812